54. ԱՆՄԱՀ ԳՈՒՀԱՐՆ, ԽԻԶԱՆ ՕՂԼԻՆ ԵՎ ՇԱՀԶԱԴԵՆ

Կէղնի, չէղնի Թագավորըմ կէղնի, էդոր ավլադ ու Թավլադ չէղնի, կհալվորնա, կիգա մեռնելու դուռ, աստված էդոր տղե մը կիտա։

Կտանին դնին վարժատուն կարդա, լուս ու արև չԹողին օր հ'էլնի։ Մշկներ կտանին-հաց ու ջուր կիտան կուտե, կառնին զամ-ներ կիգան, էդ տղի անուն Շահզագա կէղնի։

Տղեմ՝ լէ վազիրին կէղնի՝ անուն Խիզան օղլի, ղէն լէ կտանին դնին Թագավորի տղի խեչ օր կարդա։

Թագավորի տղեն միամիտ կէղնի, լուս, արև, մարդ ի՞նչ է՝ չգինա, բըլե վազերի տղեն ջատ ջանորդի կէղնի, գինա օր դուրս լուս ու արև կա, մարդ կա, ինս ու ջինս կա։

Օրըմ Թագավորի կնիկ եմակ կէնե, կիտա ուր բեսլամին օր առնե էրԹա ուր տղին։

Էդոր լէ հ'ըմն օր հաց կճամրին, օսկոր չըն Թողի զատի մեջ, իմալ կէղնի էդոր չէն ֆքրի, օսկորըմ կմնա յախնու մեջ, կառնեն կէրԹան։

Թագավորի տղեն ու վազիրին օր կնստին վըր հացին, օսկոր կէլնի Թաղավորի տղի բրդճի մեջ, կվէրցու լոռդե, քիսնի ճամ, ճամ կկոտրի ու արևու ջող կզարկե ներս։ Թագավորի տղեն օր զարեու ջող կտեսնա, կէլնի հ'ընկնի վրեն, զարկե ու զարկվի, քրտինք հե-

զեղի պես կէլնի վրավեն, կէրթա, հարի արև կոհաթի։ Վազիրի տղեն ի՞նչ կէնե, թե՝ մ'էլի մընի, էդի արևու շող է, դուրս լուս ու արև կա, մարդ ու ջանավար կա, վրեն չէղնի։ Վազիրի տղեն ճար կկտրի, կտեսնա օր էդի խոսք չհասկընա, կբռնե ձեռքեն, կառնե էրթա դուրս կցուցու, նոր կավտընա, կիգա ուր տեխ կնստի։

Կնստի, ջուհապ կէնե ուր հոր. «Ընծիկ ու վազիրի տղին մեկ-մեկ ձի ու մեկ-մեկ ձեռք սիլահ թըղ ճամբե հ'իգա, մենք կէրթանք օլըրդինք»։

Թագավորի ճար կկտրի, կէլնի մեկ-մեկ ձի ու մեկ-մեկ ձեռք սիլահ կճամբե կիգա։

Թագավոր լէ զատ ու խրար էր էրի, օր իմ տղեն մարդ էղնի, հ'էլնի ձի նստի, սիլահ առնե էրթա օլըրդի, իմ ունեցած չունեցած պիտի էնիմ հավկիթըմ, ցրվիմ ֆախիր ֆուխարին։

Հ'էլավ բացեց զուր խազինեն զպղնձներ դրեց վրեն ու էրեց խեր ու խերյաթլամա, հ'ըմեն մարդ կէրթեր ու կառներ կիգեր։

Պառավըմ լէ քթոց ձեռքն էր, կէրթեր օր բանըմ լէ ուրին բերե, իմալ էղավ, թագավորի տղի մզրաղ քիսավ, պառվու քթոց ծակավ։

Ասեց.—Լաո՛, քզիկ բան չըմ ասի, դու մեկ ու ճար իս, բան օր կասիմ քզիկ, բալքիմ դու Անմահ Գուհարի սեր մաշիս։

Էդ խոսքն օր պառավ ասեց, տղեն քանի գնաց, հետ գնաց, օր զավուր կհ'էլներ ու կմաշեր. Անմահ Գուհարի սերն հ'ընկեր էր տղի սիրտ։

Թաղավորն ու ուր կնիկ կհարցուն, չըն հարցու.—Տղա՛, ի՞նչ է էղի քզիկ, դու օր վարժատնեն դուրս հ'էլար, մարդու հավես կեր հըմա զքզիկ թամաշա էներ։

Տղեն բան չասե։ Ճար ուրանց կկտրի, կէրթան շմփլին վազիրի փողպատ. «Քու տղեն ախպերգիր էղեր է մըր տղի հետ, հարցու տեսնանք, զմըր տղի դարդ չգինա՞ ինչ է»։

Վազեր կէրթա տղից կհարցու։ Տղեն կասե.—Ես լէ չըմ գինա, էրթամ հարցում, հ'իգամ ասիմ։

Կէլնի կէրթա թագավորի տղի մոտ, կասե.—Տղա՛, ի՞նչ է էղի քզիկ օր քանի կէրթաս հետ կէրթաս։

Տղեն կասե.—Խիզա՛ն օղլի, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, էն օր օր իմ մզրաղ քիսավ պառվու չոխթրիկ կոտրավ ու պառավն ասեց. «Լաո՛, դու մեկ ու ճար իս, քզիկ բան չըմ ասի,

բան օր կասիմ, բալքի դու Անմահ Գուհարի սեր մաշիս»։ Իմ սիրտ հ՚ընկեր է կրակըմ ու կվառի։ Գնա ասե քու հոր, թըղ էրթա իմ հոր ասե, աղեկ ձիմ՚ քղիկ, մեկ լէ ընծիկ իտա, կէրթանք առնեք զԱնմահ Գուհարն ու կիդանք, օր չբերինք, կմեռնինք մնանք էն կողմերը։

Վաղիր գնաց թագավորին ասեց։ Թագավոր բերեց աղեկ ձիմ՚ Շահզադին, մեկ լէ խիզան օղլուն տվեց, մեկ-մեկ խուռձին օսկի լցեց, դրեց ուրանց հետ, բարիմնաց էղան, պագեցին ղթագավորի ձեռք ու հ՚ընկան ճամբա։

Շատ գացին, քիչ գացին, գացին մեկ սարում՚ դախիլ էղան. հ՚էլան սարու գլուխ, տեսան օր քեռշկ ու սարեմ՚ կա էգտեխ շինուկ։ Քշեցին գացին քեռշկի դուռ հ՚իջան, զձիանք քաշին ներս ու հ՚էլան վի։ Հ՚էլան վի, տեսան օր էրկու խաթ յորղան դոշակ պարզուկ, էրկու շիշ քապապ էփուկ դրուկ էդ տեխ, էրկու նարկելա, էրկու խահվա լցուկ դրուկ հ՚իրարու կուշտ, շաշ էղան ասին.—Ջանըմ, էդոնք ի՞նչ դինեն, օր մենք էրկու հոդի ինք, ղէդա էրկու տեխ թալեր ին, էրկու շիշ քապապ էփեր ին, դրի կշտի հետ, նարկիլեն ու խահվեն լցեր ին հազըր էրի։

Թագավորի տղեն ասեց.—Ուր քեֆն է, մենք լէ կնստենք, մսաֆըր էկավ, թըղ հ՚իգա վըր մըր գլխին ու աչքին, մսաֆըր աստծու մսաֆըրն է, մեկտեխ կուտինք, խմինք, կէլնինք կէրթանք։

Նստան ղուրանց հաց կերան, ղուրանց խահվեն խմեցին, ղուրանց նարկիլեն քաշեցին։

Թագավորի տղեն ասեց խիզան օղլուն.—Ընծիկ քուն կիգա, ես քիչըմ կքնիմ, դու նստի իշքե, տեսնանք մարդ չի՞գա։

Վազիրի տղեն ասեց.—Դու քնի, ես կնստիմ։

Նստավ ջըղարեմ՚ էրկու քաշեց, էդ քեռշկ ու սարի հ՚առջև ծով կեր, մեկ լէ տեսավ, օր փիր-ֆանա, սպիտակ մուրուք հալվորըմ, ֆանարջիմ՚ լէ հ՚ընկուկ է հ՚առեջ, հ՚էլան ծովու միջեն ու կիգան, էկան, էկան հ՚էլան վի, ֆանարջին ղդուռն օր զարկեց, սպիտակ մուրուք մարդն ասեց.—Դու հ՚որի՞ ղէդա դուռ զարկիր, էդ տեխ մսաֆըր կեր, մեկ խիզան օղլին է, մեկ լէ Շահզադեն,—ասեց ու դարձավ վըր ֆանարջուն, ասեց,—Ես գինամ, էդոնք էկեր ին, կէրթան Անմահ Գուհարին բերելու, թե օր հ՚արթուն ին՝ էրնեկ ուրանց, թե օր քնուկ ին՝ վա՜յ ուրանց, իմ բերնի խոսք լէ որն օր առնե ծախե ուր հ՚ընկերոջ, քար դառնա։ Լուսամութ հանդե էդոնք կէլնին ու-

բանց տեխեն։ Մարիֆաթ գալն չէ, էրթալ բերելն է։ Կէրթան ծովու պռուկ,—ֆանարջի՛,—էն տեխ մարմար քարրմ կա, զէն քար կշռջին, տրկեն կէլնի ջուխտրմ ձիու կյամ, կյամ հանդե կշրխրոցուն, ծովու մեջ էրկու հրեղեն ձի կէլնին գիկան կանին ուրանց հ՝առեջ, կհեծնին, դեմ կէրթան Անմահ-Գուհարի քաղաք կառնին, կ՝իգան։ Որն օր հ՝արթուն է, էրնեկ ուրին, որն օր քնուկ է, վա՜յ ուրին, իմ բերնի խոսք առնող ծախող լէ քար կդառնա։

Հ՝էլան լուսում, Խիզան օղլին բան չասեց Շահզադին։ Հեծան ղուրանց ձիանք ու գացին, գացին հալվորու սալրխած տեխ հ՝իջան։

Խիզան օղլին ջրոջեց զքար, էրկու կյամ հ՝էլավ տրկեն, շրխրոցուց, էրկու հրեղեն ձի կանավ հ՝առեջ։ Հեծան ու քշեցին, գացին ծովու էնդիի պռուկ հ՝իջան, զկյամեր ավզի մեջ փորին, հորեցին, ձիանք դացին մտան ծով, թալեցին ղուրանց խուրջիք վրը թևի ուրանց ու գացին, գացին Անմահ Գուհարի քաղաք հ՝էլան դուրս։

Էդա դուռ չէ, էդա է, էդա չէ, էդա է։ Գացին պառվու մը դուռ զարկին ու մտան ներս։

Ասին.—Նանե՛, նանե՛, խարիբ ինք, էկեր ինք էդա քաղքի մեջ, ճանաչ չկա, մզիկ տեխրմ տո՛ւր հ՝էսօր սրթրրվինք, հ՝էլնիք լուսուն էրթանք։

Պառավն ասեց.—Տե՛խ չկա։

Օր ասեց՝ տեխ չկա, զարկին զլրվ խուրճու մեջ, լրմփրմ օսկի լցին պառվու գոք։ Պառավ օր զօսկի տեսավ, էղավ աչխրրքով.—Քա՜ ձրր գլխուն արևուն մեռնիմ, հերք է կանիք գուռ, քելեք էրթանք ներս։

Առավ գնաց ներս, ման վրր ամնի, զրմեն էրեց հող, լցեց գետին, տեխ էրեց, տարավ զԽիզան օղլին ու Շահզադեն նստեցուց։ Հաց կերան խրլրսան, պառավն հարցուց մոտե ուրանց.—Դուք հ՝ուսդե՞ն իք։

Ասին.—Խարիբ ինք։

Օր ասին՝ խարիբ ինք, վերցին էդ էրկուք հարցուցին ասին.—Էդա քու դրկիցի տուն վի՞րն է։

Պառավն ասեց.—Թագավորին։

Օր ասեց թագավորին, հարցուցին, ասին.—Էդոր ի՞նչ կա, չկա։

Պառավն ասեց.—Ախչիկրմ՝ կա, անուն Անմահ-Գուհար է, էլ ուրիշ բան չկա։

Պառավն օր հրմալ ասեց, Խիզան օղլին ու Շահզադեն ասին. —Նանե՛, մենք էկեր ինք Անմահ-Գուհարի հ՚ապով, դու չրս կրռնա՞ զմզիկ տանի հ՚ոնի, յախուտ բերի իդա տեխ, մենք առնեք էրթանք։

Էդ պառավ լէ Անմահ-Գուհարի գլուխ լվացող ու ծամ հ՚ուսկող պառավն էր, կասե.—Չէ՛, վալլայի ես զէդ բան չրմ կրռնա էնի, իմա՞լ կրռնամ էնիմ, էնի թագավորի ախչիկ է, օր հասկցան՝ զիմ ծամ կկտրին, զիմ գլուխ կղարկին, բրլե բանրմ կառնամ էնիմ, բերիմ էդա տեխ իշքեք։

Պառավն ու Խիզան օղլին ու Շահզադեն խոսքերնին մեկ էրին, օր դուրս չէլնի, ըսին՝ գնա առ ու էկո։

Օրըմ լէ Անմահ-Գուհար ջուր կդնե ուր գլխուն, կկանչե զպառավն օր լվանա, պառավ կասե.—Հիվանդ իմ, չրմ կրռնա հ՚իդա։

Անմահ-Գուհար կասե.—Օր չը կրռնա հ՚իդա, զջուր հանեք թալեք մեկ դին, ես կէրթամ զծամերս թրղ հուսկե, հար սաղնա, հ՚իդա· լրվանա։

Պառավն է, կբերե մեկ-մեկ հոր կշինե, զՇահզադեն ու Խիզան օղլին կիջու հորու մեջ, կրլնա մեկ տաշտիկ կաթ, մեկ տաշտիկ արուն, մեկ լէ՝ ջուր, կբերե դնե էդ հորերու բերան, օր գա ախչիկ իշքե, Շահզադեն հորու միջեն թամաշա էնե զախչիկ, չունքի ծակրմ լէ տաշտի կուշտ թողեր էր։ Կիգա Անմահ-Գուհար, օր զուր գլուխ հուսկե, կիշքե օր մեկ-մեկ տաշտիկ, մեկ լրցուվ է կաթ, մեկ՝ արուն, մեկ՝ ջուր, դրուկ տախտի մեջ։

Կասե.—Նանե՛, էդա ի՞նչ է։

Պառավն կասե.—Մեկն Կարմիր ծովն է, մեկ՝ Սպիտակ ծով, մեկ լէ՝ Սև ծով։

Ախչիկն կասե.—Նանե՛, էդոնք իմա՞լ ծով կէղնին, ու աչք կփրթնի կաթի մեջ ու արնի մեջ։

Շահզադեն ծրկեն կիշքե զախչիկ, օր կիշքե՝ խելք կէրթա գլխեն, կհ՚ընկնի հորու մեջ։

Ախչիկ զուր գլուխ կհուսկե, կթողե կէրթա, էդ պառվուն լէ, զուր գլուխ հ՚որի՞ հուսկել կիտա, հուսկել կիտա օր անորդի մերիկ է, չէղնի անիծե զինք, սրտի մուրադին չհասնի, ուր ծամեր ժրժան հ՚իգան։

Ախչիկ օր կթողե կէրթա, պառավ կհ՚էլնի, կվերցու զտաշտեր, Խիզան օղլին կէլնի կտեսնա, օր Շահզադի ուշք հ՚ընցեր է. կքաշին հանին հորուց դուրս, խելք կբերին հ՚ինք, տանին պառկրցուն։

Կմնա քանիմ՝ օր կէրթա, պառավն աղեկցեր է, կէլնի կէրթա ախչկա մոտ։

Կէրթա ախչկա մոտ, կնստի խոսա, կասե.—Ախչի՛, հ՚որի՞ չրս կարգվի։

Ախչիկն կասե.—Հըմալ մարդ չկա օր առնիմ։

Պառավն կասե.—Արի՛, տղեմ՝ ես կգտնամ քղիկ։

Պառավն օր հըմալ կասե, ախչիկ կասե.—Նանե՛, ես գինամ դու հանաք է կէնիս, մակար սրտե՞դ է կասիս։— Կբերե թարանջի գլուխ, առհա քղիկ լանկեմ՝ պառվու գլխուն, կհըլոնդե, կիտա թարանջեսներուց ցած, կթողե կէրթա։

Պառավ կէրթա ջըլերով կպառկի, քանիմ՝ օր կընցնի վրեն, ախչիկ կփոջեմնի վըր ուր էրածին, կասե. «ես էդ ի՞նչ էր էրի, մեծ կնիկ էր, ասեց՝ թըղ ասեր, մնար ուր հալին, կէլնիմ կէրթամ պառվու սիրտ առնիմ, չէղնի դիս անիծե»։

Պառավ կկոահե օր Անմահ-Գուհար պիտի հ՚իգա զինք տեսնա, կբերե մեկ լէ Շահզադեն ու Խիզան օղլին կիջու հորու մեջ, կըլնա մեկ տաշտ կաթ, մեկ՝ արուն, մեկ լէ՝ ջուր, կդնե վըր հորու բերնին։

Ախչիկ կիգա մեկ լէ կտեսնա օր մեկ տաջտ կաթ, մեկ՝ արուն, մեկ լէ՝ ջուր լըցուկ դրուկ ին տախտի մեջ։

Կասե.—Նանե՛, էդա ի՞նչ է։

Կասե.—Լաո՛, ինչ պիտի էղնի, մեկ Կարմիր ծովն է, մեկ՝ Սպիտակ, մեկ լէ՝ Սև։

Օր կասե, Շահզադեն ծրկեն ղախչիկ կտեսնա, խելք կընցնի, կընկնի հորու մեջ։

Ախչիկն էկավ ասեց.—Նա՛նե, ընցած օր հերսոտեր ենք, քղիկ զարկի դրրբըմ, ասի զայեր խաթըր մնաց, էկեր իմ ղքու խաթըր կառնիմ, օր դիս չանիծիս, ըի ղքու ձեռք դիր վըր իմ գլխուն, օրհնե դիս։

Պառավն է, ղձեռք դրեց ախչկա գլխուն, քիչըմ պըթպըթաց, ասեց.—Դը գնա՛, օրհնի ղքղիկ, ես օր մեռնիմ, ինչ ձեռք օր առնե քու ծամեր, էն գահուն կիջնի։

Ախչիկ հ՚էլավ բարիմնաց էղավ, զնաց։

Ախչիկն օր հ՚էլավ գնաց։ Պառավն հ՚էլավ վերցուց զտաշտեր, դրեց մեկ կողմ, Խիզան օղլին հ՚էլավ հորու միջեն, տեսավ օր մեկ լէ Շահզադի ուշք հ՚ընցեր է, հ՚ընկի գետին, քիչըմ ջուր լցեց վըր հ՚էրսին, խելք բերեց գլուխ ու հանեց տարավ պառկցուց։

Խիզան օղլին ասեց.—Հըմլա չէղնի, պետք է էդոր ճարըմ գըտնամ։

Հ'էլավ գնաց շուկեն, թոքմաճիմ' գտավ, ասեց.—Ուստա՛, ընծիկ թըճե քուչակըմ կշինիս, հմալ օր մարդմ' պարտկի մեշ։

Թոքմաճին ըսավ.—Թը՛ղ էղնի։

Զգին բազար էրին, թոքմաճին թե մեկ օրեն, թե էրկու օրեն շինեց տվեց Խիզան օղլին ու առավ գնաց։

Խիզան օղլին է, բերեց ղէդ թճե քուչակն մտուց Շահզադեն մեջն ու առավ հ'ընկավ քաղաքն ու թաղեր, կտաներ խաղցներ դրուներ, ուրեն փարա կառներ։

Զեն գնաց հասավ Անմահ-Գուհարի անկաճ, թե չասիս՝ թըճե քուչակըմ էկեր է, կխաղա մարդու պես, ճամբեց առավ գնաց։ Օր ճամբեց առավ գնաց, թագավորի ախչիկ նստուկ էր փանշարեն, Խիզան օղլին զարկեց ու քուչակ խաղցավ, հար հ'իրկուն խաղցավ, հ'իրկուն տվեց փարա, Խիզան օղլին վերցուց զուր քուչակ, էկավ ուր խոնախ պառվու տուն, բացեց զքուչըկվենեն, Շահզադեն հ'էլավ միջեն, պառկան քնան, ախչիկ լէ թողեց գնաց ուր դիվան։

Լուսուն օր էղավ, մեկ լէ Խիզան օղլին հ'էլավ շալկեց զուր քուչակն ու հ'ընկավ թաղեր։

Էդ Անմահ-Գուհարի բեալամեք տեսան, գացին ասին.—Էն քուչակ մեկ լէ էկեր է ֆըլան տեխ կխաղա։

Ասեց.—Գացե՛ք, առե՛ք էկեք։

Գացին Խիզան օղլուն ասին.—Քելե՛ էրթանք, զքզիկ թագավորի ախչիկ կկանչե, կասե՝ քիչըմ լէ էդատեխ թըղ հ'իգա, զարկե խաղա, մենք թամաշա էնինք։

Խիզան օղլին հ'էլավ շալկեց զուր քուչակն ու գնաց, զարկեց ու քուչակ խաղցավ, հ'իրկուն օր էլավ, ախչիկն ասեց.—Հերք է։

Հանեց քանիմ' փարա դրեց քուչկու ձեռք, ինք թողեց գնաց ուր դիվան, Խիզան օղլին զարկեց ուր քուչակ ուր հ'անթե տակ, էկավ պառվու տուն և բացեց զքուչըկվենին, Շահզադեն հ'էլավ միջեն ու գնացին նստան։

Օր էկան նստան, Խիզան օղլին Շահզադին ասեց.—Գինա՞ս, ըստհաղ օր զքզիկ թագավորի ախչիկ տարավ, հանդե կհանե վերին դին դնե, գիշեր դու կմնաս հ'ոնի, կհ'էլնիս քու տեխեն ալթ ու ուստ կէնիս, կիգաս քու տեխ, կնստիս։

Լուսուն հ'էլան, մեկ լէ Խիզան օղլին շալկեց զուր քուչակ հ'ըն-

կավ թաղեր։ Օր հ՚ընկան թաղեր, մարդ ճամբեց Անմահ-Գուհար խիզան օղլուն, թե՝ թող առնե զուր քուչակ, հ՚իգա հ՚ոդա խաղա։

Խիզան օղլին շալկեց զուր քուչակն ու գնաց հ՚էլավ թագավորի ախչկա դիվան։ Օր հ՚էլավ թարանճեք, ասեց.—Շահզա՛դա, իշալլահ մըր գործ հաշող է։

Տարավ հար հ՚իրկուն զարկեց, հ՚իրկուն օր էղավ, վերցուց կիգեր։ Ախչիկն ասեց.—Թը՛ղ մնա հ՚ոդի, վաղ էկո զարկ թող խաղա, առ ու գնա։

Քուչակ թողեց էնտեխ խիզան օղլին ու դարձավ էկավ պառվու տուն։

Էդ ախչկան լէ ադաթըմ կեր, մեկ ճրագ կդներ գլխու վերև, մեկ լէ օտներու տակ ու իրեք ստաքյան շարբաթ կշիներ, դներ գլխու վերև, կպառկեր, կքներ։

Հ՚իրկուն օր էղավ, պառավ բերեց մեկ շամդան դրեց գլխու վերև, մեկ լէ օտներու տակ, իրեք ստաքյան շարբաթ լէ շինեց, պառկավ քնավ։

Գիշեր օր էղավ, Շահզադեն հ՚էլավ ուր թըճվենուց, էկավ վերցուց ղգլխու շամդան, դրեց օտներու տակ, օտներու տըկուն՝ գլխու վերև, ղիրեք ստաքյան շարբաթ խմեց ու գնաց մտավ ուր թճվենու մեջ։

Ախչիկըն հ՚էլավ լուսուն տեսավ օր մեկըմ էկեր է ուր կուշտ ու բոլոր խառներ է, գացե։

Ասեց. «Ջանըմ, էդի ո՞ր պիտի էղնի, ես հ՚իրկուն աղեկըմ զիմ հ՚օդի դուռ փակի էկա, պառկա, հ՚ուսդե՞ն էկավ էդ մարդ. կէղնի ու չէղնի, հիլեն էդա թըճրի տակն է»։

Լուսուն էլավ, խիզան օղլին հ՚էլավ էկավ։

Ասեց.—Խաթո՛ն, խաթո՛ն, ես խեղճ իմ, տուր զիմ քուչակ, տանիմ խաղցում, քանի մը փարա առնիմ, էնիմ զիմ իդարեն։

Ախչիկն ասեց.—Հ՚էսօր լէ թըղ մնա խաղա, էկո վաղ առ զքու քուչակն ու քու փարեն զնա, լա՛ո, մարդըմ զձըր քուչակ չխըլե ձըր ձեռքեն։

Տղեն թողեց գնաց։ Հ՚իրկուն օր էղավ, ախչիկն բերեց մեկ մոմ վառեց դրեց գլխու վրեն, մեկ լէ օտներու տակ, իրեք ստաքյան շարբաթ շինեց, դրեց գլխու վերև, ասեց. «Վալա՛յի, ես հ՚էսօր գիշեր զիս սուտ քուն պիտի դնիմ, տեսնամ էդա թըճվենուց ի՞նչ կհ՚էլնի»։ Պառկավ ու զյորղան քաշեց գլուխ ու ռազեց խրռալ,

մեկ լէ իշքեց՝ ճընկուն էկավ, թրճվենու դուռ բացվավ ու տղեմ՝ դուրս հ՝էլավ, մարդ էրկու աչքով չկռնա իրես իշքե. զգլխու վրա-վու մոմ վերցուց, տարավ դրեց օտքերու տակ, օտքերու տկուն՝ գլխու վերև ու էկավ վըր շարբթին, մեկ ստաքյան խմեց, մեկ լէ էդ էր օր զձեռք թալեց, վերցուց կխմեր, թալեց զբիլակ բռնեց, հ՝էլավ, նստավ, հ՝իրարու հետ թոխա էրին։

Ախչիկն է, հարցուց, փորձեց.—Դու վի՞ր տղեն իս, ի՞նչ հ՝էրկ-րեն իս։

Տղեն ասեց.—Ես ֆըլան թագավորի տղեն իմ, օրըմ պառվում՝ քթոց ղարկի կոտրի, ասեց.—«Լաո, դու մեկ ու ճար իս, բան չըմ ասի քղիկ, բան օր կասիմ Անմահ-Գուհարի կրակ էրիցես»։ Զէդ օր ասեց, կրակ հ՝ընկավ իմ սիրտ ու կվառեր, ինչքան գացի՝ հետ գացի, իմ հեր հարցուց հ՝իսնե. «Հ՝որի դու օր ղոր կհալիս-մաշիս»։ Ասի՝ ֆըլան բան հ՝աբով։

Տվեց մեկ-մեկ ձի, ընծիկ ու իմ ախպըրգրեն հ՝էլանք էկանք էդա տեխ հ՝էլանք դուրս, էկանք պառվու խեչ մացինք. էրկու հեղ դու էկար էնտեխ, մենք հորն ինք մտուկ։ Մըր ճար կտրավ, հ՝էլավ իմ հ՝ընկեր բերեց թըշե քուչակըմ շինեց, դիս դրեց մեշ ու առավ հ՝ընկավ թաղեր։ Կխաղցըներ, փարա կառներ։ Զեն էկավ հասավ քու անկաճ, էրկու հեղ բեՙրիր քու փանճարի տակ խաղցուցիր, վըր իրեք հըղուն հանիր վի, դիշեր օր մանցի մինակ, դու վառիր ճրա-գըմ դրիր գլխուդ տակ։ Մեկ լէ օտներուդ տակ ու իրեք ստաքյան լէ շարբաթ էրիր, դրիր գլխուդ վերև, հ՝էլա իմ թըշվենուց, խմեցի դիրեք ստաքյան շարբաթ, զգլխուդ մոմ դրի օտներուդ տակ, օտ-ներուդ՝ գլխուդ վերև ու գացի մտա իմ թրճվենու մեշ, հ՝էսօր լէ օր հ՝էլա դուրս, թալիր զձեռքդ բռնեցիր։

Ախչիկն ասեց.—Օր հըմալ է, ես՝ քղիկ, դու՝ ընձիկ։

Գրկեցին զիրար ու պառկան, առ շաֆթալի, վեր շաֆթալի, շաֆթալու հազարն էղավ մեկ փարա։

Լուսուն օր հ՝էլան, ախչիկն ասեց.—Վաղ ես իմ քառսուն բես-լամի հետ կէլնիմ կէրթամ իմ հոր խաս բաղչեն օլըրդիմ, հեծեք զձըր ձիանք, էկեք էնտեղրանք օլըրդինք, ես կթողիմ զիմ բեսլա-մեք բաղչի գլուխ, կիգամ ցածի դին, առեք զիս ձըր թարկին ու էրթանք։

Վերցուց զՇահզադեն դրեց ուր թրճվենու մեշ, փակեց զդուռ ու կանկըցուց։

Խիզան օղլին է, հ'ելավ լուսուն էկավ, ասեց.—Խաթո՛ւն, խաթո՛ւն տուր զիմ թրճվենին, առնիմ էրթամ։

Ասեց.—Հանդե՛, հոնա՛, ա՛ռ ու գնա։

Շալկեց ու դեմ գնաց պառվու տուն։ Օր գնաց պառվու տուն, Շահզադեն բացեց ղթրճվենին, հ'էլավ դուրս։

Խիզան օղլին ասեց.—Իմա՞լ էղավ։

Շահզադեն ասեց.—Հեչ ձեն մ'հանի, էղավ։

Էդ տեխ պատմեց զուր գլխու դալած Խիզան օղլուն, թե գիշեր հ'էլա օր զգլխու ճրագ վերցնեք դնեք օտներու տակ, օտներուն՝ գլխու վերև ու խմենք ղշարբաթ, էրթենք մտնենք իմ տեխ, դու մ'ասի էդի հ'արթուն էր մանցի, մեկ ստաքյան շարբաթ խմի, ղձեռքըս թալի օր մեկէլ ստաքյան լէ խմենք, հուշիկրմ զիմ բըլակ բըռնեց, ասեց. «Ես՝ քղիկ, դու՝ ընծիկ»։ Փաթվանք հ'իրար պառկանք, հ'էլանք լուսուն։ Ասեց. «Ես վաղ կէրթամ իմ հոր խաս բաղչեն օլըրդիմ, էկո, առ դիս, գնա»։ Հ'էլավ զիս դրեց իմ խաֆասի մեջ, էկար առար դիս ու էկար։

Լուսմութ օր էղավ, թագավոր տվեց թալալ կանչեց՝ ինչ օր օրձեզեն է, դուրս պետք չէ էլնի, հ'էսօր թագավորի ախչիկ կէրթա խաս բաղչեն, բելա ճետեր լէ չթողին օր դուրս էլներ։

Թագավորի ախչիկն է, հ'էլավ, առավ զուր քառսուն բեսլամեն, դնաց խաս բաղչեն, Շահզադեն ու Խիզան օղլին լէ հեծան ղուրանց ձիանք, գացին խաս բաղչի տակ կանան։ Թագավորի ախչիկն լէպատեց զուր ջառիեք թողեց վերին դին, էկավ ցած, տեսավ օր Շահզադեն ու Խիզան օղլին էկեր ին էդ տեխ, կաներ ին։

Ձինք թալեց Շահզադի թարկին ու թռան։ Հաբ ջուհապ գնաց թագավորին, թե Անմահ-Գուհար տարին, Շահզադեն ու Խիզան օղլին հասան ծովու պռուկ, հանեցին ղկյամեր տվին կրակ, ջուխտակ հրեղեն ձիանք կանան հ'առեջ ուրանց։ Հեծան, հ'ընցան ղծով, գացին ու ուրանց հ'առջին հրղվան հ'իջաց քեռջկ մսաֆըր էղան։ Օր էկան քեռջքի դուռ, հանին զձիանու կյամեր, ձիանու բերնեն, ձիանք թողին գացին, մտան ծով, տարան զջուխտակ կյամ դրին էմլե էն քարի տակ, էկան հ'էլան վի։ Էկան հ'էլան վի, տեսան օր իրեք խաթ յաթաղ պարզուկ է, իրեք ջիջ քապապ դրուկ է յաթղի մոտ, իրեք նարդիլե ու իրեք խահվե լցուկ դրուկ կշտի ու մարդ չկար։ Հ'էլան վի նստան, կերան խմեցին։

Անմահ-Գուհարն ասեց.—Ես նեղեցուկ իմ, կպառկիմ քնիմ։

Խիզան օղլին ասեց.—Կպառկեք դուք պառկեք, ես չըզարեմ՝ կքաշիմ սորա կպառկիմ։

Խիզան օղլու միտք լէ ի՞նչ էր. ասեց. «Կանի տեսնամ, հ՚ընցած ավուր զալացող մարդ հ՚էսօր լէ չի՞գա»։

Անմահ-Գուհարն ու Շահզադեն պառկան քնան։ Խիզան օղլին մնաց զարթուն։ Չըզարեմ՚, էրկու քաշեց, մեկ լէ տեսավ ուր մարդ, ֆանարչին հ՚առեշ, քելեցին ծովու վրեն ու էկան, էկան հ՚էլան վի, ֆանարչին զդուռ զարկեց, հալվորն ասեց.—Զդուռն հ՚որի՞ կզարկես, մզիկ մըսաֆրը կա։ Շահզադեն, Անմահ-Գուհարն ու Խիզան օղլին էկեր ին մսաֆրը, գացեր ին առի Անմահ-Գուհարն ու էկի։ Բայց բերել մարիֆաթ չէ, գլուխ հանելն է մարիֆաթ,—ու կասե,—թե քնուկ ին՝ վա՜յ ուրանց, թե հ՚արթուն՝ էրնեկ ուրանց։

Ֆանարչին կասե.—Հ՚ո՞րի։

Հալվորն կասե.—Իմ խոսք առնող ա, ուր հ՚ընկերին ծախող լէ քար կդառնա, էն մեկտեղելու օր հ՚ուշապըմ կիգա, էրկուս լէ Շահզադեն ու Անմահ-Գուհար քնուկ կէղնին, կիշնի զէրկուս լէ կխեղդե, կդառնա կէրթա։

Խիզան օղլին զէդի կլսե ու կպառկի քնի, կէլնի լուսուն, խիզան օղլին մեկ լէ Շահզադեն բանըմ չասեն, կհեծնին ղուրանց ձիանք, կընկնին ճամբախ ու կէրթան։ Կէրթան, շուհաբ կէրթա թագավորին, թե չասիս՝ Շահզադեն առավ ղԱնմահ-Գուհարն էկավ։ Թագավոր զէդ օր կլսե, կէլնի ուր աթպայով կիգա հ՚առեշ, կտանե կիշու, կբերե հարսնեք բռնե, յոթն օր, գիշեր ու ցերեկ հարսնեք կէնե։

Հարսնեք օր կֆրղի, կրերին թագավորի տղեն մեկտեխեն, Խիզան օղլին կասե.—Էդ հ՚իգամ, էդ էրթամ, ես կէրթամ հ՚էսօր գիշեր թագավորի տղի մոտ պառկիմ։

Մեկ կասե՝ յոլ չէ, մեկ կասե՝ ուր ախպերգիրն է, կէրթա թըղ էրթա, հալբաթ էնդոնք զիրար գինան, ձեն կէրթա հասնի թագավորի տղի անկաճ։ Կասե.—Թըղ հ՚իգա՜, մըր մեշ ֆարղ չկա։

Կէրթա թագավորի տղեն ու ուր կնիկ կգրկին զիրար պառկին, Խիզան օղլին կնստի կիշքե, կիշքե, օր կես գիշեր էղավ, հ՚ուշապըմ հ՚առվեն հ՚իջավ էկավ ու ձգավ թագավորի տղի ու հարսի վրեն։ Կքաշի զթուր հասնի վրեն, կտոր-կտոր կէնե, կըլնա գետին։ Կտոր-կտոր կէնե կհըլնա գետին, կաթըմ արուն կփրթնի ցըխա թագավորի տղի ճակատ։

30—276

Խիզան օղլին կասե.—Էդա արուն պիտի մնա Թագավորի տղի ճակատի վրեն, էղնի այիպ։

Կբերե շորըմ կկապե Թրի ծեր, կհ'էրկնցու օր վերցու, Թագավորի տղեն կզարթի։ Կասե.—Հայ բերա՜ղտ, օղորթ օր հում կաթ ուտողին իթիպար չկա, կէներ օր զիս սպաներ, զիմ կնիկ առներ, հա՞։

Խիզան օղլին կասե.—Ջանը՛մ, հ'ո՞րի հըմալ կասիս, քու ճակտի վրեն կաթըմ արուն էր հ'ընկի, կվերցնենք։

Թագավորի տղեն մեկ լէ կղորե։

Ջանղարդի կէղնի, Խիզան օղլին կասե.—Ե՞ս իմ հում կաթ ուտող, քու բերա՞ն էր օր զԱնմահ-Գուհարն բերեց, քու բերա՞ն օր գնաց հանեց զկյամեր քարու տկեն, բերեց զձիան հեծավ գնաց, Անմահ-Գուհարի քաղաք, քու բերա՞ն էր օր շինեց Թըճե խաֆաս, զքզիկ գրեց մեշ, առավ գնաց ախչկա մոտ, քու բերա՞ն էր օր զէդա հ'ուշապ սպանեց։

Մեկիկ-մեկիկ ինչ օր հ'ընցեր ու դարձեր էր ուրանց գլուխ, զըմեն պատմեց, ինչ խդար օր կպատմեր՝ կէղներ քար, զհ'ուշապ օր կցուցու, հար գլուխ կդառնա քար։ Շահզադեն կտեսնա, օր Խիզան օղլին դարձավ քար, կտփե վըր գլխուն, Անմահ-Գուհար կիմնա, կհէլնի նստի, կտեսնա օր քարըմ կանուկ էնտեխ։

Կասե.—Էդա ի՞նչ քար է։

Շահզադեն կպատմե ալ ու քեֆյաթ հըմլա էղավ, կցուցու զհ'ուշապ։

Օր կցուցու զհուշապ, Անմահ-Գուհար կասե.—Էդ հ'իգամ, էդ էրթամ, չուրի Խիզան օղլին չդառնա, էղնի հավալկու Խիզան օղլին, էլ քզիկ կնուԹեն չըմ էնի։

Մարդն կասե.—Էդոր ճար մնաց մեկ բան, հ'էլնիմ էրթամ էն քեոշկ ու սարեն, ճար էղնի՝ էնդիեն է։

Կէլնի, հեծնի զուր ձին ու կքշե կիգա էդ քեոշկ կիշնի, Թե էրկու, Թե իրեք օր կմնա, քուն կտանե, չկռնա հ'արթուն մնա։ Վըր չորս ավուր, կբերե զուր մատ կկտրե, քիչըմ աղ կըլնա մեշ, մատ կմռմռա, զուր շղարեն Թիրյաքլանմիշ կէնե ու կնստի։ Մեկ լէ կտեսնա օր հալվորըմ ֆանարշին հ'առշև, էկավ դուռ հասավ։

Ֆանարշին զդուռ զարկեց։

Հալվորն ասեց.—Հ'որի՞ կզարկես, մսաֆըր կա, ես չասի Անմահ-Գուհարի տանիլն չէ մարիֆաթ, շահելն է։ Ես գինամ Խիզան

օղլու փոր չտարեր է, խոսացեր է, դարձեր է քար, Շահզադեն էդոր հ՚ապով է էկի։ Հըմկա-հըմկա կէղնի, թե օր Շահզադին ու Անմահ-Գուհարին առջինեկ տղա էղնի, բերին ուրանց սրտով մորթեն, հանեն զարուն, քսեն խիզան օղլու քար, կդառնա կէղնի հավալկու խիզան օղլին։

Կպառկի քնի, կէլնի լուսուն, կհեծնի զուր ձին ու կքշե կիդա։

Տարին կթմի-չթմի, աստծու հրամանով տղեմ՚ կբերի Անմահ-Գուհարն։ Կբերին մորթին, հանին զարուն, քսին խիզան օղլու քար, խիզան օղլին կէղնի հավալկու խիզան օղլին. ճըմըլդկա, հ՚էլնի կանի։

Էրեխի համար լէ ասեր էր հալվորն՝ օր բերին զզլուխն ու ջանդակ զարկին հ՚իրար, աստված ուրանց սիրու համար զէն լէ խվամիշ կէնե ուրանց, կհանե կանկըցու։

Խիզան օղլին օր ճըմըլդկաց հ՚էլավ, ըստհաղ բերին զտղի գլուխն ու ջանդակ հ՚իրարու զարկին։

Տղեն ինչ օր քնուց հ՚էլներ, ճմըլդկաց հ՚էլավ նստավ։

Նոր բերին խիզան օղլին կարգին։ Յոթն օր, յոթ գիշեր հարսնեք էրին։ Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՚իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։